ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2012թ. N 426

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ /ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ/ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի ներմարզային կանոնավոր երթուղիների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 2 արձանագրությունը և մրցութային ամփոփ թերթիկները.

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի ընդունած որոշումը՝ 2012 թվականի հոկտեմբերի 5-ին անցկացված մրցույթի վերաբերյալ:
2. Թույլատրել՝
   ա/ «Հրաչյա և Տիգրան» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը սպասարկելու «Արմավիր-Ալաշկերտ» միկրոավտոբուսային երթուղին՝ 4 /չորս/ տարի ժամկետով:
   բ/ «Լիլոյա» սահմանափակ պատասխանատվության ընկերության Արմավիր-Նորավան» միկրոավտոբուսային երթուղում շահագործվող գազել մակնիշի 133 LS 28 պետհամարանիշի 2967 L դեղին հիմնագույն համարանիշի միկրոավտոբուսի փոխարեն շահագործել գազել մակնիշի 650 LT 61 պետհամարանիշի միկրոավտոբուսը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ